«Թեղուտ» ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ
2022թ. համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ	3
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն	7
Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն	8
Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն	9

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Թեղուտ» ՓԲԸ-ի բաժնետերերին և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «Թեղուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով: Անյուամենայինիվ, ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ենթակա են հնարավոր խեղաթյուրման նույն չափով որքանով և Ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցմանը:

Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացությունը

2024թ. հոկտեբերի 8-ի մեր աուդիտորական եզրակացությունում մենք արտահայտել ենք վերապահումով կարծիք Ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Վերապահումով կարծիքի հիմքը հետևյալն է՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա էին հայտանիշներ, որ հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը կարող էր ցածր լինել վերջիններիս 86,752,113 հազար դրամ հաշվեկշռային արժեքից 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 36 *«Ակտիվների արժեզրկում»* համաձայն՝ այդպիսի հայտանիշների առկայության դեպքում ղեկավարությունը պետք է իրականացնի ակտիվների փոխհատուցվող գումարի գնահատում և ճանաչի արժեզրկումից կորուստ(առկայության դեպքում): Այդպիսի գնահատում չէր իրականացվել և արժեզրկումից կորուստ չէր ճանաչվել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Բացի այդ, ղեկավարությունը մեզ չի տրամադրել բավարար համապատասխան տեղեկատվություն, որը թույլ կտար գնահատել, թե արդյոք այդ անհամապատասխանությունը հանգեցրել է էական խեղաթյուրման ֆինանսական հաշվետվություններում: Հետևաբար, մենք անկարող էինք որոշել արդյոք անհրաժեշտ էր կատարել որևէ ճշգրտում հիմնական միջոցների նշված գումարների գծով 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ ընդամենը համապարփակ եկամտի գծով:

Մեր աուդիտորական եզրակացությունը ներառում է նաև *«Էական անորոշություն գործունեության անընդհատության հետ կապված»* բաժինը, որտեղ ուշադրություն ենք հրավիրում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ 2 (բ)-ին և 19-ին: Ծանոթագրություններ 2 (բ)-ում և 19-ում նշված է, որ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը խախտել էր վարկային պայմանագրերի կովենանտները, ինչը թույլ էր տվել բանկին պահանջել վարկերի վաղաժամ մարումը: Համապատասխանաբար 150,149,425 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վարկերը դասակարգվել են որպես ընթացիկ պարտավորություններ, որի արդյունքում ընթացիկ պարտավորությունները գերազանցել են ընթացիկ ակտիվները 142,163,328 հազար դրամով, իսկ ընդհանուր ակտիվները՝ 55,210,100 հազար դրամով: Ինչպես նշվում է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 2 (բ)-ում, այդ հանգամանքները, Ծանոթագրություն 2 (բ)-ում նկարագրված այլ հարցերի հետ մեկտեղ, վկայում են էական անորոշության առկայության մասին, որը կարող է նշանակալի կասկածներ հարուցել անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու Ընկերության կարողության վերաբերյալ: Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևափոխված չէ այդ հարցի հետ կապված:

Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է արտահայտել կարծիք, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմք ընդունելով Աուդիտի միջազգային ստանդարտ 810 (վերանայված) *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* համաձայն իրականացված մեր ընթացակարգերը:

Դավիթ Շամշյան
Առաջադրանքի համար
պատասխանատու գործընկեր

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր,
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
8 հոկտեմբերի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2022թ.

հազ. դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	86,752,113	93,736,457
Ոչ նյութական ակտիվներ	201,115	231,622
Հետաձգված հարկային ակտիվ	-	3,614,100
Ոչ ընթացիկ ակտիվներ	**86,953,228**	**97,582,179**
Պաշարներ	15,618,414	15,438,759
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	3,509,895	5,171,052
Կանխավճարներ ընթացիկ ակտիվների և ծախսերի համար	558,338	1,780,236
Փոխհատուցման ենթակա ԱԱՀ	-	188,234
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	738,608	640,025
Ավանդներ	24,750	-
Ընթացիկ ակտիվներ	**20,450,005**	**23,218,306**
Ընդամենը ակտիվներ	**107,403,233**	**120,800,485**
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	3,100,100	3,100,100
Լրացուցիչ կապիտալ	18,870,973	13,270,019
Կուտակված վնաս	(78,470,328)	(83,090,922)
Ընդամենը սեփական կապիտալ	**(56,499,255)**	**(66,720,803)**
Պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	615,883	6,828,083
Տեղանքի վերականգնման գծով պահուստ	673,272	582,927
Ոչ ընթացիկ պարտավորություններ	**1,289,155**	**7,411,010**
Վարկեր և փոխառություններ	157,344,294	173,851,075
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	5,269,039	6,259,203
Ընթացիկ պարտավորություններ	**162,613,333**	**180,110,278**
Ընդամենը պարտավորություններ	**163,902,488**	**187,521,288**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**107,403,233**	**120,800,485**

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	**2022թ.**	**2021թ.**
Հասույթ	20,244,120	86,661,177
Վաճառքի ինքնարժեք	(13,130,610)	(40,996,890)
Համախառն շահույթ	**7,113,510**	**45,664,287**
Այլ եկամուտ	263,170	3,329,504
Իրացման ծախսեր	(89,488)	(245,385)
Վարչական ծախսեր	(3,023,243)	(5,341,534)
Այլ ծախսեր	(14,406,554)	(15,180,337)
Գործառնական գործունեության արդյունքներ	**(10,142,605)**	**28,226,535**
Ֆինանսական եկամուտ	31,505,834	18,346,172
Ֆինանսական ծախսեր	(14,358,013)	(16,198,952)
Զուտ ֆինանսական եկամուտ	**17,147,821**	**2,147,220**
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**7,005,216**	**30,373,755**
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ	(2,384,622)	2,383,179
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ	**4,620,594**	**32,756,934**

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. հոկտեմբերի 8-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Վլադիմիր Նալիվայչենկո
Գլխավոր տնօրեն

Մկրտիչ Պետրոսյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2021թ.	3,100,100	5,021,168	(115,847,856)	(107,726,588)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	32,756,934	32,756,934
Գործառնություններ բաժնետիրոջ հետ				
Ներված հաշվեգրված տոկոսներ և գրավի իրացման միջոցով մարված վարկ՝ առանց 1,810,723 հազար դրամ հարկի	-	8,248,851	-	8,248,851
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**3,100,100**	**13,270,019**	**(83,090,922)**	**(66,720,803)**
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	3,100,100	13,270,019	(83,090,922)	(66,720,803)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				
Տարվա շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ	-	-	4,620,594	4,620,594
Գործառնություններ բաժնետիրոջ հետ				
Ներված հաշվեգրված տոկոսներ՝ առանց 1,229,478 հազար դրամ հետաձգված հարկի	-	5,600,954	-	5,600,954
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**3,100,100**	**18,870,973**	**(78,470,328)**	**(56,499,255)**

Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 2022թ. համար

հազ. դրամ	2022թ.	2021թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ	22,433,460	86,253,158
Մատակարարներին և աշխատակիցներն վճարված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ	(14,523,511)	(40,252,196)
Պետական բյուջեից ստացված/պետական բյուջե (վճարված) զուտ ԱԱՀ	1,206,740	(736,419)
Վճարված ռոյալթի	(4,530,000)	(4,715,112)
Վճարված արտահանման պետական տուրք	(1,982,470)	(5,008,321)
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(839,360)	(3,260,860)
Կատարված նվիրատվություններ	(30,145)	(144,017)
Խորհրդի վարձատրությունը	(70,528)	(350,836)
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ մինչև տոկոսների վճարումը	**1,664,186**	**31,785,397**
Վճարված տոկոսներ	(43,003)	(24,278,179)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր	**1,621,183**	**7,507,218**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(3,540,740)	(9,334,830)
Ավանդների տեղաբաշխում	(24,750)	-
Ստացված տոկոսներ	12,382	22,923
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր	**(3,553,108)**	**(9,311,907)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	2,078,846	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքեր	**2,078,846**	**-**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**146,921**	**(1,804,689)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	640,025	2,762,445
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(48,338)	(317,731)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	**738,608**	**640,025**

Դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

1. Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Թեղուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ստանդարտների համաձայն պատրաստված 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2024թ. հոկտեմբերի 8-ին: Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ. և այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների 6-ից 9-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Ընկերության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի Ընկերության գրասենյակից (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գյուղ Թեղուտ, 3-րդ փողոցի 2-րդ փակուղի, №2 (Թումանյանի տարածաշրջան)):